ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՐԵԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

0090, ք.Երևան, Շոպրոնի 77

N 01/18287 «26» 07 2023թ.

Էդվարդ Հովհաննեսի Վասիլյանին
Հասցե՝ ք., Երևան, Արցախի փողոց, 8բ շ., 81 բն.

ՈՒղարկում եմ Ձեր դիմումի հիման վրա ՀՀ ՆԳՆ ոստիկանության պարեկային ծառայության վարչական բողոքների քննության բաժանմունքում իրականացված վարչական բողոքարկման վարույթի արդյունքում թիվ 8300697684 վարչական ակտը բեկանելու և վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը կարճելու մասին որոշումը:

Առդիր՝ << 3 >> թերթ:

Պետ, ոստիկանության գնդապետ՝ ***Ա.Խուդինյան***

Կատ. Ա. Վարդանյան

ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ ՆԳՆ ոստիկանության պարեկային ծառայության վարչական իրավախախտման վերաբերյալ գործով 15.07.2023թ.-ին կայացված թիվ 8300697684 որոշումը բեկանելու և վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը կարճելու մասին.

<< 26 >>__07__2023թ.

ք.Երևան

ՀՀ ՆԳՆ ոստիկանության պարեկային ծառայության պետ, ոստիկանության գնդապետ Ա. Խուդինյանս, վերանայելով Էդուարդ Հովհաննեսի Վասիլյանի (Այսուհետ՝ դիմող) 24.07.2023թ.-ի դիմումի հիման վրա հարուցված վարչական բողոքարկման վարույթի նյութերը,

ՊԱՐԶԵՑԻ

15.07.2023թ.-ին՝ ժամը 22:15-ի սահմաններում, Երևան քաղաքի Արցախի պողոտայում դիմողը «Կիա» մակնիշի 37 DN 610 հաշվառման համարանիշի տրանսպորտային միջոցը վարել է առանց գործող ԱՊՊԱ պայմանագիր: ՀՀ ՆԳՆ ոստիկանության պարեկային ծառայության Երևան քաղաքի գնդի 3-րդ գումարտակի 3-րդ վաշտի կրտսեր պարեկ Լուսինե Պետրոսյանի կողմից վարորդի նկատմամբ կազմվել է վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն՝ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 129.2-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն և կայացվել է թիվ 8300697684 որոշումը՝ դիմողին 100.000 ՀՀ դրամի չափով տուգանելու մասին:

Դիմողը 24.07.2023թ.-ի դիմումով խնդրել է վերանայել պարեկային ծառայության վարչական իրավախախտման վերաբերյալ գործով 15.07.2023թ. կայացված թիվ 8300697684 որոշումը՝ մասնավորապես նշելով, որ տրանսպորտային միջոցը՝ արձանագրություն կազմելու պահին, ունեցել է գործող ԱՊՊԱ պայմանագիր: Դիմումին կից ներկայացրել է «Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ-ի կողմից տրված վկայագրի պատճենը և նույն ԱՍՊԸ-ի կողմից տրված տեղեկանք:

Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի հիմքով ՀՀ ոստիկանության պարեկային ծառայության վարչական բողոքների քննության բաժանմունքում հարուցվել է վարչական բողոքարկման վարույթ:

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով՝ քննության են առնվել իրավախախտման բոլոր, այդ թվում՝ դիմումատուի օգտին առկա փաստական հանգամանքները, ինչի արդյունքում պարզվել է, որ վարչական իրավախախտման վերաբերյալ գործով 15.07.2023թ. կայացված թիվ 8300697684 որոշումը ենթակա է բեկանման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

«Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ պետք է մշտապես ունենա սեփականության իրավունքով իրեն պատկանող (ֆինանսական վարձակալության (լիզինգի) պայմանագրով իրեն տրամադրված) և Հայաստանի Հանրապետությունում հաշվառված յուրաքանչյուր ավտոտրանսպորտային միջոցի համար կնքված և գործող ԱՊՊԱ պայմանագիր: Արգելվում է ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհներով ավտոտրանսպորտային միջոցի վարումը, եթե դրա համար առկա չէ այն վարելու պահին գործող ԱՊՊԱ պայմանագիր:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 129.2-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ առանց տվյալ տրանսպորտային միջոցի համար կնքված ավտոտրանսպորտային միջոցի օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության գործող պայմանագիր ունենալու՝ Հայաստանի Հանրապետության տարածքում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհներով տրանսպորտային միջոցը վարելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:

Պարեկային ծառայողի կողմից տրված պարզաբանման համաձայն՝ 15.07.2023թ.-ին՝ ժամը 22:15-ի սահմաններում, Երևան քաղաքի Արցախի պողոտայում դիմողը «Կիա» մակնիշի 37 DN 610 հաշվառման համարանիշի տրանսպորտային միջոցը վարել է առանց գործող ԱՊՊԱ պայմանագիր: Առանց գործող ԱՊՊԱ պայմանագիր վարելու փաստը արտացոլվել է դյուրակիր համակարգչի ծրագրում, որի արդյունքում կազմվել է վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն և կայացվել որոշում:

Ուսումնասիրելով դիմողի կողմից ներկայացված թիվ SR 442664 վկայագրի և «Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ- ի կողմից 18.07.2023թ.-ին տրված տեղեկանքի պատճենները՝ պարզ է դառնում, որ «Կիա» մակնիշի 0755EJ հաշվառման համարանիշի տրանսպորտային միջոցի (նույնացման համար 3KPFL4A71JE250344) համար կնքվել է ԱՊՊԱ պայմանագիր «Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ-ի հետ 03.04.2023թ.-ի ժամը 17:10-ից մինչև 02.04.2023թ.,իսկ նշված տրանսպորտային միջոցի վրա 10.04.2023թ.-ին տեղադրվել է 37 DN 610 հաշվառման համարանիշները:

Վերոգրյալից պարզ է դառնում, որ 15.07.2023թ.-ի ժամը 22:15-ին ՝ վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կազմելու պահին «Կիա» մակնիշի 37 DN 610 (0755 EJ) հաշվառման համարանիշի տրանսպորտային միջոցը ունեցել է գործող ԱՊՊԱ պայմանագիր:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 247-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը չի կարող սկսվել, իսկ սկսվածը ենթակա է կարճման եթե բացակայում է վարչական իրավախախտման դեպքը կամ կազմը:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 251-րդ հոդվածի համաձայն՝ վարչական իրավախախտման վերաբերյալ գործի

ապացույցներ են համարվում ցանկացած այն փաստական տվյալները, որոնց հիման վրա օրենքով սահմանված կարգով մարմինները (պաշտոնատար անձինք) հաստատում են վարչական իրավախախտման առկայությունը կամ բացակայությունը, տվյալ անձի մեղավորությունը այն կատարելու մեջ և գործի ճիշտ լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքներ: Այդ տվյալները հաստատվում են հետևյալ միջոցներով՝ վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությամբ, վարչական պատասխանատվության ենթարկվող անձի բացատրություններով, տուժողի, վկաների ցուցմունքներով, փորձագետի եզրակացությամբ, իրեղեն ապացույցներով, իրեր և փաստաթղթեր վերցնելու վերաբերյալ արձանագրությամբ, ինչպես նաև այլ փաստաթղթերով:

Նույն օրենսգրքի 252-րդ հոդվածի համաձայն՝ մարմինը (պաշտոնատար անձը) ապացույցները գնահատում է իր ներքին համոզմունքով, որը հիմնված է գործի՝ իրենց ամբողջությամբ վերցված բոլոր հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա, ղեկավարվելով օրենքով և սոցիալիստական իրավագիտակցությամբ:

Այսպիսով, ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 293-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. ՀՀ ՆԳՆ ոստիկանության պարեկային ծառայության վարչական իրավախախտման վերաբերյալ գործով 15.07.2023թ. կայացված թիվ 8300697684 որոշումը բեկանել և վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը կարճել:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հանձնելու օրվան հաջորդող օրը և կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:
3. Սույն որոշման օրինակն ուղարկել դիմողին և ՀՀ ՆԳՆ ոստիկանության պարեկային ծառայության Երևան քաղաքի գունդ:

Պետ, ոստիկանության գնդապետ՝ ***Ա. Խուդինյան***